Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը***
Հակոբ Մաթևոսյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ:

3. ***Գործուղման վայրը և ժամկետները.***
Շվեյցարիայի Համադաշնություն, ք.Ժնև՝ սույն թվականի 2023 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 13-ը:

4. ***Հրավիրող կողմը.***
ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին կոնվենցիա»-ի քարտուղարություն:

5. ***Գործուղման նպատակը***
Մասնակցել Օրհուսի կոնվենցիայի և «Կենսաբազմազանության մասին կոնվենցիա»ի կենսանվտանգության մասին Կարթագենյան արձանագրության հովանու ներքո կլոր սեղան ձևաչափով քննարկմանը, որի հիմնական նպատակն էր նպաստել գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կամ կենդանի վերափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ/ԿՎՕ) վերաբերյալ հանրության իրազեկման, կրթության, տեղեկատվության հասանելիության, հասարակության մասնակցության և արդարադատության հասանելիության վերաբերյալ կարողությունների ամրապնդմանը, որոշումների կայացմանը, գիտելիքների և փորձի փոխանակմանը, ինչպես նաև մշակել համապատասխան առաջարկներ՝ հետագա հասցեական գործողությունների համար:

6. ***Քննարկված թեմաները***
Կայացած միջոցառման նախագահությունը ստանձնել է Ավստրիայի կառավարությունը, միջոցառմանը հրավիրող կողմ է հանդիսացել նաև Օրհուսի կոնվենցիայի քարտուղարությունը և մինչ գործուղումը երկու քարտուղարությունների կողմից տրամադրել է հարցաթերթ, որի միջոցով երկու կոնվենցիաների քարտուղարությունները ցանկացել են հավաքագրել առանձին դեպքերի, գործնական օրինակների մասին համապատասխան տեղեկատվություն, օրինակ՝ ԳՁՕ-ների հարցերով երկրում հանրության իրազեկվածության և կրթության մակարդակի, տեղեկատվության հասանելիության, հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության խթանման մասին (լրացված և հրավիրող կողմին փոխանցված հարցաթերթին կարելի է ծանոթանալ «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգում ներքին՝ № Ն/ՄՉ/10295 գրությամբ): Հարցման արդյունքները քարտուղարությունների կողմից կիրառվել են միջոցառման հանդիպման նախապատրաստման և օրակարգի ձևավորման գործում:

Սույն թվականի դեկտեմբերի 11-ից 12-ը կայացած միջոցառմանը մասնակցել եմ շրջակա միջավայրի նախարարի իրավախորհրդատու, Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող Մարի Չաքրյանի հետ համատեղ:

Միջոցառման օրակարգի հիմնական բաղադրիչներ են հանդիսացել.

- 2005 թվականի մայիսին «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի կողմերի 2-րդ հանդիպման ժամանակ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի ԳՁՕ-ների մասին ուղղման վավերցացման անհրաժեշտության և վերջինիս վավերացման հետ կապված մարտահրավերների վերաբերյալ ելույթներ երկու քարտուղարությունների ներկայացուցիչների կողմից,
- միջոցառման մասնակից հանդիսացող երկրների ներկայացուցիչների կողմից՝ (Ալբանիայի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ինդոնեզիայի Հանրապետություն, Գվինեա-Բիսսաույի Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն, Քենիայի Հանրապետություն, Բոսնիայի և Հերցեգովինայի Հանրապետություն, Մեքսիկայի Դաշնային Հանրապետություն) իրենց երկրներում Կարթագենայի արձանագրության և Օրհուսի կոնվենցիայի ներքո՝ ԳՁՕ/ԿՎՕ վերաբեյալ հանրային իրազեկվածության և կրթության մակարդակի, գործող իրազեկման համակարգերի և դրանց բաղադիրչների առանձնահատկությունների, ինչպես նաև այդ ամենի օրենսդրական կարգավորումների առկայության, կիրառման և դրանց հետ կապված խնդիրների ներկայացում (ներկայացումից հետո՝ պանելային քննարկումներ),
- երկու քարտուղարությունների կողմից՝ Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության դրույթների, ինչպես նաև Կարթագենայի արձանագրության և Կունմինգ-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի (22-րդ Թիրախ) վերաբերյալ,
- մասնակիցների հետ հարց ու պատասխանի միջոցով՝ ԳՁՕ/ԿՎՕ-ի հետ կապված արդարադատության մատչելիության ընթացակարգերի և պրակտիկայի վերաբերյալ վարժություններ,
- երկու կոնվենցիայիների մասնակից երկրների՝ Մոլդավայի, Թունիսի, Ֆինլանդիայի և Իսպանիայի հանրապետությունների ներկայացուցիչներից բաղկացած խմբի կողմից օրվա ընթացքում քննարկված թեմաների, խնդիրների, հայեցակարգերի և առաջարկների վերաբերյալ՝ հաշվետվությունների հրապարակում,
- ելնելով վերոնշյալ օրակարգային հարցերով քննարկումների արդյունքներից՝ մասնակիցները հրավիրվել են քննարկելու տեղեկատվության հասանելիության բարելավման, հանրային իրազեկման հնարավորությունների, կրթության, հասարակության մասնակցությունը որոշումների կայացմանը և արդարադատության մատչելիությունը ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, ինչպես նաև քարտուղարությունների միջև այդ ուղղությամբ հետագա համագործակցության հնարավորությունների և այլ միջազգային կազմակերպությունների հետ գործակցելու հեռանկարները:

***7. Հանդիպումները ելույթները***

Որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ՝ Մարի Չաքրյանի և իմ կողմից մեկ սահիկաշարի շրջանակներում ներկայացվեց հետյալը՝

- Մարի Չաքրյանի կողմից ներկայացվեց Հանրապետությունում ԳՁՕ/ԿՎՕ-ների ներմուծմամբ պայմանավորված՝ ոլորտի կարգավորման օրենսդրական դաշտի

ստեղծման խիստ անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն, «Սննդի անվտանգության մասին» օրենքի, ԳՁՕ/ԿՎՕ պարունակող սննդամթերքի մակնշման վերաբերյալ իրավական կարգավորումների, այդ թվում՝ մաքսային կանոնակարգերի խստացման մասին, 2018 թվականին էկոնոմիկայի նախարարին կից ստեղծված կենսաանվտանգության և կենսապահովության հարցերով աշխատանքային խմբի վերաբերյալ, որի օրակարգում է նաև երկրի շուկայում ԳՁՕ/ԿՎՕ-ների շրջանառության կարգավորումը՝ միևնույն ժամանակ ապահովելով այդ տեղեկատվության հասանելիությունը հանրությանը, նշվեց նաև վերջերս հաստատված՝ ԳՁՕ-ների մասին օրենքի և հարակից իրավական ակտերում փոփոխությունների կարևորության ինչպես նաև մշակման և վերջնականացման փուլում գտնվող՝ «Կենսաանվտանգության և կենսապահովության մասին» օրենքի վերաբերյալ:

Ներկայացուցչի կողմից ներկայացվել է նաև ԳՁՕ-ների մասին օրենքին հաջորդած մի շարք կարևոր իրավական ակտերի ընդունումը, մասնավորապես՝ գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների համար ԳՁՕ-ների ներմուծման, արտահանման և ոչնչացման կարգի, ԳՁՕ-ների գործածության և կենսավտանգների պատճառով շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի և առողջության, գյուղատնտեսական նշանակության հողերի ազդեցության կանխարգելման և պատճառված վնասների մասին գործողությունների ծրագիրը:

Ներկայացուցչի կողմից նշվել են նաև մի շարք մարտահրավերներ՝ շահերի բախում, տնտեսական կորուստների մտավախություն, ոչ ավանդական կամ ավելի շահավետ գյուղատնտեսական սերմերի ներկրման հնարավորության խոչընդոտներ, ԳՁՕ-ների մասին ամբողջական տեղեկատվության բացակայության հանգամանք և ընդգծվել միջազգային գործընկերների աջակցությամբ ոլորտի կատարելագործմանն ուղղված ջանքերի գործադրման մասին:

- Իմ կողմից նախ և առաջ ներկայացվել է Հանրապետություն բուսական և կենդանական աշխարհի հարուստ բազմազանության վերաբերյալ տեղեկատություն և այդ համատեքստում նշվել է հնարավոր ռիսկերի կանխատեսման և կանխման անհրաժեշտությունը, այդ թվում՝ ԳՁՕ/ԿՎՕ-ների ոլորտում առկա ռիսկերը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ նշվել է, որ 2021 և 2022 թվականների ընթացքում Հայաստանում տեղի է ունեցել կենսաանվտանգության տեղեկատվական հարթակում առկա տեղեկատվությունից և մեխանիզմներից արդյունավետ օգտվելու եղանակներին նվիրված սեմինար:

Հարկ է նշել, որ վերոնշյալ սեմինարը կազմակերպվել էր շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից՝ դեկտեմբերի 10-ին և 11-ին ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Երրորդ ազգային բաղադրիչի իրականացում» ծրագրի շրջանակներում Ջերմուկ քաղաքի «Գրանդ Ռեզորթ Ջերմուկ» հյուրանոցում:

Ելույթի ընթացքում նշվել է, որ սեմինարի աշխատանքներին մասնակցելու համար հրավիրված էին ՀՀ բոլոր մարզպետարանների գյուղատնտեսության և բնապահպանության վարչության ներկայացուցիչները, շրջակա միջավայրի նախարարության ենթակա կառույցների, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների աշխատակիցներ, սեմինարի նպատակն էր շահագրգիռ բոլոր կողմերին ծանոթացնել կենսաանվտանգության մասին Կարթագենայի

արձանագրության շրջանակներում ստեղծված կենսաանվտանգության տեղեկատվական հարթակում առկա տեղեկատվությունից և մեխանիզմներից արդյունավետ օգտվելու եղանակներին, ինչպես նաև կենսաանվտանգությանն առնչվող տեղեկատվության հրապարակման ընթացակարգերին:

Սեմինարի նպատակն է եղել «BCH (https://bch.cbd.int/en/)» վեբ-կայքի օգտագործման ազգային կարողությունների ավելացումը, այնտեղ համապատասխան տեղեկատվության որոնման և գրանցման, կայքին տեղեկատվության փոխանցման ընթացակարգերը կամ մեխանիզմները սահմանելու, ինչպես նաև տեղեկատվության հոսքը դեպի կայք կազմակերպելու, կրթական ոլորտներում ներգրավելու կարողությունների զարգացումը: Սեմինարի նպատակներից էր նաև Կարթագենայի արձանագրության և դրա ներքո՝ կենսաանվտանգության ոլորտում ազգային, տարածաշրջանային և միջազգային համագործակցության խթանումը՝ համապատասխան միջազգային գործակալությունների, հատկապես նրանց, ովքեր առնչություն ունեն կենսաանվտանգային տարբեր ծրագրերի հետ:

Կարևոր էր նաև ազգային և տարածաշրջանային կենտրոնների և ծրագրերի բացահայտումը, որոնք կարող են սպասարկել վերոնշյալ կայքի հետ աշխատանքի կարողությունների զարգացման նախաձեռնությունները:

Իմ կողմից նշվել է նաև, որ կայացված սեմինարից հետո մենք նպատակադրված ենք մշակել Կարթագենայի արձանագրության ներքո՝ ԳՁՕ/ԿՎՕ-ների համակարգի զարգացման ռազմավարություն, որը բաղկացած է լինելու գործողությունների հստակ հաջորդականությունից, ինչպիսիք են ոլորտի օրենսդրական դաշտի բարելավումը և օրենսդրական գործիքների ներդրումը, աշխատաժողովին մասնակցող կազմակերպությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներգրավումը: Որպես վերոնշյալ ռազմավարության վերջնական արդյունք՝ իմ կողմից նշվել է, որ մենք ցանկանում ենք ունենալ անհրաժեշտ թվով ակտիվ օգտատերեր և փորձագետներ «BCH» կայքում, ինչպես նաև հստակ մշակված տեղեկատվության մուտքագրման քաղաքականություն:

**8. *Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը***

Երկու կոնվենցիայիների մասնակից երկրների՝ Մոլդավայի, Թունիսի, Ֆինլանդիայի և Իսպանիայի հանրապետությունների ներկայացուցիչներից բաղկացած խմբի կողմից աշխատանքային 2 օրերի արդյունքների ամփոփման շրջանակներում՝ քննարկված թեմաների, խնդիրների, հայեցակարգերի և առաջարկների վերաբերյալ հրապարակվեց 4 հաշվետվություն.

- 1-ին ահաշվետվություն (ներպետական և միջազգային համագործակցություն) – ընդգծվեց մի շարք երկրներում հասարակության մասնակցության ակտիվացման մասին, կենտրոնական պետական մարմինները սկսել են լսել և ընդունել հասակարակության կարծիքը և մտավախությունները և ըստ դրա կառուցել ոլորտում իրենց կողմից վարվող քաղաքականությունը (հաշվետվության հրամապարկման ընթացքում ընդգծվեցին Մոլդովայի և Ինդոնեզական հանրապետությունների օրինակները): Հաշվետվությունում որպես առաջընթաց՝ նշվեց նաև Աֆիրկական երկրների միջև ոլորտում փոխհամագործակցային կապերի ձևավորման հանգամանքը,
- 2-րդ հաշվետվություն (կրթություն և իրազեկում) – նշվեց որ ԳՁՕ/ԿՎՕ-ների ոլորտում՝ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների մասով առկա է

բավականաչափ աշխատող օրենսդրություն, որը կատարելագործման միտում ունի, հատկապես նշվեց դպրոցական տարիքի երեխաների կողմից ԳՁՕ/ԿՎՕ-ների վերաբերյալ բազային գիտելիքների առկայությունը, և դպրոցական ծրագրերում դրանց վերաբերյալ ծրագրերի ներդրման հանգամանքը՝ «zoom» հարթակի միջոցով մեր երկրի դպրոցական ներկայացուցիչների կողմից սաhիկաշարի տեսքով ներկայացված զեկույցի օրինակով: Ընդգծվեց միջազգային կազմակերպությունների դերը ԳՁՕ/ԿՎՕ-ների շուրջ՝ կրթության խթանման գործում: Որպես հիմնախնդիրներ նշվեց մասնակից երկրներում բնակչության շրջանում ընդհանուր իրազեկվածության և դրանց համար հատկացվող ռեսուրսների սակավությունը և ընդգծվեց Օրհուսի կոնվենցիայից բխող պարտավորությունների շրջանակներում՝ կոմունիկացիոն խողովակների մշակման անհրաժեշտությունը,

- 3-րդ հաշվետվություն (հանրային մասնակցություն) – որպես ոլորտում առաջընթաց՝ նշվեց ԳՁՕ/ԿՎՕ-ների շուրջ էլեկտրոնային կոնսուլտատիվ մեխանիզմների առկայությունը (որպես օրինակ՝ նշվեց Բոսնիայի և Հերցեգովինայի Հանրապետությունում գործող էլեկտրոնային կոնսլուտացիաների ինտերնետային կայքը), որպես հիմնախնդիրներ՝ նշվեց մասնակից երկրներում հանրային մասնակցության ապահովումը և բնակչության ոչ բավարար հետաքրքրվածությունը (որպես օրինակ՝ նշվեց Մեքսիկայի Դաշնային Հանրապետությունում առկա բազմազգ և բազմալեզու բնակչության հանգամանքը) և որպես վերոնշյալ հիմնախնդիրների լուծում՝ առաջարկվեց կիրառել հասարակ գործիքներ՝ հրապարակել օրաթերթերում, տարբեր կայքերում, բուկլետների տեսքով և այլն,
- 4-րդ հաշվետվություն (արդարադատության հասանելիություն) – զեկուցողի կողմից նշվեց, որ անհրաժեշտ է մշակել արդարադատության կիրառելիության, և հասանելիության, ինչպես նաև օրենսդրական դաշտի մասով գիտելիքների գնահատում, ընդգծվեց ոլորտի լեգիտիմության ամրագրման հանգամանքը՝ մասնակից պետություններում իրավական համակարգը ԳՁՕ/ԿՎՕ-ների հետ կապված օրենսդրական խնդիրների և ռիսկերի գնահատում, ինչպես նաև նշվեց, որ վերոնշյալ խնդիրների շուրջ արդարադատության համակարգն անհաժեշտ է դիտարկել նաև մարդու իրավունքների կոնտեքստում: Որպես հիմնախնդիրներ՝ նշվեց ազգային օրենսդրական կարգավորումների՝ միջազգային նորմերին համապատասխանեցման դեպքերի սակավությունը (Օրհուսի կոնվենցիայի կետերին համապատասխան): Որպես առաջարկներ նշվեց դատական համակարգում ԳՁՕ/ԿՎՕ-ների հետ կապված իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը, ԳՁՕ/ԿՎՕ-ների ոլորտում արդարադատության իրականացմանն ուղղված օրենդրական բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրություն և կիրառում:

9. ***Առաջարկությունները, դրանց ընթացք փալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները***

Ելնելով վերոնշյալ օրակարգային հարցերով ներկայացումների, քննարկումների, հաշվետվությունների արդյունքներից՝ միջոցառումը նախագահողի կողմից իրականացվեց ամփոփում՝ տեղեկատվության հասանելիության բարելավման, հանրային իրազեկման հնարավորությունների, կրթության, հասարակության մասնակցությունը որոշումների կայացմանը և արդարադատության մատչելիությունը ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում,

ինչպես նաև քարտուղարությունների միջև այդ ուղղությամբ հետագա համագործակցության հնարավորությունների և այլ միջազգային կազմակերպությունների հետ գործակցելու հեռանկարների վերաբերյալ: Նախագահողի կողմից հնչեցված ամփոփիչ խոսքից իմ կողմից առանձնացվել և նշվել է, որ մասնակից պետությունները պետք է ստանձնեն հանձնառություն՝

- ❖ ամրապնդելու էկոակտիվիստների և վերջիններիս կազմակերպությունների դերը ԳՁՕ/ԿՎՕ-ների ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման գործում՝ հղում անելով Օրհուսի և Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի համապատասխան հոդվածներին,
- ❖ ԳՁՕ/ԿՎՕ-ների ոլորտում ներպետական հասարակական, մասնավոր և պետական կազմակերպությունների միջև սիներգիայի ձևավորման,
- ❖ ԳՁՕ/ԿՎՕ-ների ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով՝ կադրային և ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացիայի,
- ❖ մասնագիտացված լաբորատորիաների (մասնավոր և/կամ պետական) ստեղծման ուղղված գործուն քայլերի կիրառման,
- ❖ հանրային մեդիայում ԳՁՕ/ԿՎՕ-ների վերաբերյալ իրազեկվացության մեծացմանն ուղղված քայլերի ձեռնարկման,
- ❖ ԳՁՕ/ԿՎՕ-ներ պարունակող մթերքների մակնշման հետ կապված ընթացակարգերի մշակման՝ ներառելով համապատասխան մասնավոր և պետական կազմակերպություններին,
- ❖ 2005 թվականի մայիսին «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի կողմերի 2-րդ հանդիպման ժամանակ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի ԳՁՕ-ների մասին ուղղման վավերացման:

Վերոնշյալ հանձնառությունների 7-րդ կետով նշված և Ալմաթիում ընդունված՝ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի ԳՁՕ-ների մասին ուղղման ընդունման ժամանակ որոշվել է, որ այն ուժի մեջ կմտնի եթե այդ պահին կոնվենցիայի կողմ հանդիսացած 35 անդամներից առնվազն 27-ը կվավերացնեն այն: Հարկ է նշել, որ մինչ այժմ՝ վերոնշյալ ուղղումը վավերացվել է կոնվենցիայի կողմ հանդիսացող 32 անդամի կողմից, որից 26-ն են ընդունման պահին հանդիսացել կոնվենցիայի կողմ, մասնավորապես՝ պակասում է ևս 1 վավերացում, որպեսզի վերոնշյալ ուղղումն ուժի մեջ մտնի, ընդ որում՝ որոշիչ ձայն ունեցող երկրներն են կոնվենցիայի կողմ հանդիսացող Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղստանը, Հարավային Մակեդոնիան, Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ուկրաինան:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ որպես առաջնային քայլ անհրաժեշտ է ձեռնարկել նշված ուղղման վավերացման գործընթաց, ինչը կընդգծի մեր երկրի հանձնառությունը իրականացնելու վավերացված երկու կոնվենցիաների համապատասխան դրույթների կատարման, ինչպես նաև ոլորտում միջազգային շրջանակներում կբարձրացնի երկրի վարկանիշը, միաժամանակ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ ուղղված՝ ԳՁՕ/ԿՎՕ-ների վերաբերյալ հանրային իրազեկվացության բարձրացմանը (օրինակ՝ հեռուստատեսությամբ և համացանցով հեռարձակել կարճ տեղեկատվական հոլովակներ, տպել կարճ տեղեկատվական ուղեցույցեր և այլն):

Գործուղվող՝  Հակոբ Մաթևոսյան